ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1957 Общественные науки

Հ. Ադաչանյան

ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԹԵՈՐԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Իր գործունեության ընթացքում Շահումյանը հատուկ ուշադրություն էր հատկացնում ազգային հարցին։ Նրա աշխատություններից շատերը նվիրված են մեր պարտիայի ազգային ծրագրի պաշտպանությանը։ Ազգային հարցի նկատմամբ Շահումյանի այդպիսի ուշադրությունը բխում էր Անդրկովկասում և Հայաստանում տեղի ունեցող պրոլետարիատի դասակարգային պայքարի առանձնահատուկ պայմաններից։ Անդրկովկասը ցարական Ռուսաստանի կիսագաղութն էր. երկրամասի տնտեսական հետամնացությունը, բնակչության բազմազգ կազմը, ճնշված ազգերի ազգային ինքնագիտակցության արթնացումը ազգային հարցը մղեցին առաջին պլանի վրա։

Շահումյանը բացահայտում է ժամանակակից նացիոնալիզմի ռեակցիոն էությունը. նա ցույց է տալիս, որ նացիոնալիզմը ղեկավարվելով իդեալիստական մտածողության սկզբունքներով անընդունակ է ըմբռնելու ազգի ռեալ էությունը և լուծելու ազգային հարցը։ Ժամանակակից բուրժուազիան իր քաղաքականությամբ ոչ թե լուծում է ազգային հարցը, այլ ստեղծում՝ «ազգային դժոխք»։

Որպես մարքսիստ-դիալեկտիկ, Շահումյանը նացիոնալիզմը դիտում է իր զարգացման մեջ։ Նա վեր է լուծում նացիոնալիզմի ծագման պատմական արմատները, նրա էվոլյուցիան և արդի վիճակը։ Շահումյանը գտնում է, որ ժամանակակից նացիոնալիզմը վաղ շրջանի նացիոնալիզմից տարբերվում է ոչ այնքան իր սոցիալական ծագմամբ ու բովանդակությամբ, որքան այն պատմական խնդիրներով, որոնց նա կոչված է ծառայելու բուրժուազիայի զարգացման տվյալ էտապում։ Կապիտալիզմի զարգացման և հասարակության մեջ բուրժուազիայի դրության փոփոխման հետ փոփոխություններ է կրում նաև նացիոնալիզմը։ Շահումյանը նշում է նացիոնալիզմի էվոլյուցիայի երեք էտապ՝ նացիոնալ-դեմոկրատիզմ, նացիոնալ-լիբերալիզմ և նացիոնալ-իմպերիալիզմ։ Եթե կապիտալիզմի զարգացման վաղ շրջանում նացիոնալիզմը հանդիսանում էր ազգային շուկայի և ազգային պետության ստեղծման դրոշը, ապա ժամանակակից նացիոնալիզմն իմպերիալիստական բուրժուազիայի ձեռքին գաղափարական զենք է՝ ուրիշի տերիտորիաները զավթելու և ժողովուրդներին հնազանդեցնելու համար։

Նացիոնալ-դեմոկրատիզմը համապատասխանում է բուրժուազիայի զարգացման այն շրջանին, երբ նա ռևոլյուցիոն ուժ էր և հենվելով ժողովրդական մասսաների վրա, պայքար էր մղում ֆեոդալիզմի հիմքերի դեմ։

Նացիոնալ-լիբերալիզմը կապիտալիզմի ու բուրժուազիայի զարգացման ավելի ուշ շրջանի արգասիք է։ Բուրժուական ռևոլյուցիայի հաղթանակից հետո

բուրժուազիան հաստատում է իր քաղաքական տիրապետությունը։ Այդ հանգամանքը որոշակի փոփոխություններ է առաջ բերում բուրժուազիայի գաղափարախոսության ու քաղաքականության մեջ։ Նացիոնալ-դեմոկրատիզմը փոխարինվում է նացիոնալ-լիբերալիզմով։ Այն դաշինքը, որ ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարում ստեղծվել էր բուրժուազիայի և ժողովրդական մասսաների միջև, բուրժուազիայի քաղաքական տիրապետության ժամանակ քայքայվում է։ Սրվում են հակասությունները տիրող դասակարգ բուրժուազիայի և ժողովրդական մասսաների, հատկապես պրոլետարիատի միջև։ Ձեռնարկատերերի միջև տեղի ունեցող կոնկուրենցիան հասցնում է այն բանին, որ ժողովրդական մասսաների ինտենսիվ շահագործման հետևանքով, գնալով հարստությունը կուտակվում է ձեռնարկատերերի ավելի փոքրաթիվ խմբի ձեռում։ Այն լոզունգները, որոնցով բուրժուազիան պայքարում էր ռևոլյուցիայի նախօրյակին, այն է՝ եղբայրություն, հավասարություն, ազատություն, նա մեկ ընդմիշտ մոռացության տվեց։ Բուրժուազիան նացիոնալ-լիբերալիզմի դրոշի տակ պայքար է մղում բուրժուական «սրբազան» սեփականությունը պահպանելու և ամրապնդելու համար։ Նացիոնալիզմի և լիբերալիզմի սերտ կապը Շահումյանը բացատրում է հետևյալ կերպ. «Ինչպես անհատական սեփականությունը և անհատական մրցումը պետության ներսում, նույնպես ազգային սեփականությունը մարմնացած ազգային պետությունների մեջ, և այդ պետությունների մրցումը համաշխարհային շուկայում,— միևնույն բուրժուական կոնցեպցիայի, բուրժուական հասարակության երկու անբաժան կողմերն են»[1]։ Բուրժուազիայի քաղաքական տիրապետության պայմաններում նացիոնալ լիբերալիզմը դառնում է նրա գաղափարական զենքը՝ բուրժուական մասնավոր սեփականության ինստիտուտն ամրապնդելու և սրբագործելու համար։

Կապիտալիզմի զարգացման հաջորդ, բարձրագույն ստադիայում՝ իմպերիալիզմի դարաշրջանում, նացիոնալիզմը թևակոխում է մի նոր փուլ։ Նա դառնում է նացիոնալ-իմպերիալիզմ։ Այս շրջանում նացիոնալիզմն ինքն իրեն ժխտում է, որը տեղի է ունենում հետևյալ կերպ. ազգային բուրժուազիան իր տնտեսական ձգտումներով դուրս է գալիս ազգային շուկայի և ազգային պետության շրջանակներից։ Նոր տերիտորիաների, վաճառահանման նոր շուկաների և հումքի աղբյուրների նվաճման հետևանքով նա իր տնտեսական ու քաղաքական տիրապետության տակ ստեղծում է բազմազգ իմպերիալիստական պետություն։ Որպես բուրժուազիայի գաղափարախոսություն ու քաղաքականություն, այն նացիոնալիզմը, որը բուրժուազիայի զարգացման վաղ շրջանում դրոշ էր ազգային, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ամբողջության ստեղծման համար, ինքնաժխտվում է։ Իմպերիալիստական բուրժուազիան վարում է համաշխարհային գերիշխանություն նվաճելու քաղաքականություն։ «Նացիոնալիզմը եղել է և կա,— գրում էր Շահումյանը,— այն տարբերությամբ միայն, որ նախկին առաջադիմական ու ռևոլյուցիոն նացիոնալիզմը դարձել է այժմ մի ծայրահեղ հետադիմական իդեոլոգիա։ Բացի այդ, նացիոնալիզմը, հասնելով իմպերիալիզմի շրջանում իր գագաթնակետին, միաժամանակ հենց իմպերիալիզմի մեջ բացասում է ինքն իրեն։ Պատմության այդ կենդանի դիալեկտիկան հասկանալու համար վերին աստիճանի հարուստ ու հետաքրքիր նյութ է տալիս

[1] Ստ. Շահումյան, *Ընտիր երկեր*, էջ 429—430։

ներկա համաշխարհային պատերազմը»։ Առաջին համաշխարհային պատերազմի վերլուծության հիման վրա Շահումյանը ցույց է տալիս նացիոնալ-լիբերալիզմի փոխարկումը նացիոնալ-իմպերիալիզմի։ Այդ պատերազմում բուրժուազիան ձգտում էր ոչ միայն պահպանել իր ազգային տերիտորիան, այլև բռնություն կիրառելու միջոցով նվաճել նոր տերիտորիաներ, ճնշել և ստրկացնել մյուս երկրների ժողովուրդներին, ճնշել բանվորների ամեն մի ռևոլյուցիոն շարժում։ Վամպիրի նման նա ծծում է այդ ժողովուրդների արյունը, նրանց զրկում է քաղաքական ազատությունից ու անկախությունից, արգելակում է նրանց կուլտուրական զարգացումը և այդ ամենը քողարկում է «հայրենիքի շահերի պաշտպանության» շիրմայով։ Ինութագրելով նացիոնալ-իմպերիալիզմի զավթողական ձգտումները, 1916 թ. Շահումյանը գրում է. «Նա ստրկացնում ու կեղեքում է հետամնաց երկրների, գաղութների ազգաբնակչությանը, ճնշում ու բռնի ուժով խեղդում է ամեն մի դիմադրություն բանվորական մասսաների կողմից — հանուն «հայրենիքի» շահերի և բերում է վերջապես դեպի այն զարհուրելի ընդհարումները ազգերի միջև, որոնց մենք ականատես ենք այսօր»[2]։

Ազգային հարցի ճիշտ լուծումը Շահումյանը սերտորեն շաղկապում էր ամենից առաջ ազգի էության գիտա-մատերիալիստական ըմբռնման հետ, որը հանգեցնում է որոշակի, ռեալ հետևությունների ազգային հարցը լուծելիս։ Ընդհակառակը, բուրժուական իդեալիստական մտածողությունը, ազգությունը դիտելով որպես մի ինչ-որ վերացական, միստիկական բան, ոչ մի կոնկրետ գործնական հետևության չի պարտավորեցնում։

Ելնելով մարքսիստական մատերիալիզմի սկզբունքներից, Շահումյանը հերքում է ազգի ամեն տեսակի իդեալիստական ըմբռնումը։ Նա բացասում է Բագեշոտի ագնոստիցիզմը, որը իր «Ազգերի զարգացումը ժառանգականության և բնական ընտրության հիման վրա» աշխատության մեջ, երկար տատանումներից հետո, այն հարցին, թե ինչ բան է ազգը, պատասխանում է հետևյալ կերպ. «դա դժվարին հարց է և ես հանձն չեմ առնում լիովին պատասխանելու այդ հարցին»[3]։ Բագեշոտի ագնոստիցիզմին Շահումյանը հակադրում է մարքսիստական մատերիալիստական իմացության տեսությունը։ Շահումյանը հերքում է ազգի էության սուբյեկտիվ իդեալիստական մախիստական ըմբռնումը։ Այդ տեսակետից հետաքրքիր է գերմանական խոշոր բուրժուազիայի տեսաբան և իրավագետ, ժամանակին համաշխարհային հռչակ ունեցող Գ. Ելլինեկի հայացքների քննադատությունը Շահումյանի կողմից։ Ելլինեկը հերքելով ազգի օբյեկտիվ գոյությունը, պնդում է, որ ազգը գոյություն ունի միմիայն մարդկանց դիտակցության մեջ, նա իրենից ոեալ մեծություն չի ներկայացնում։ Հերքելով մախիստների իդեան և իրականությունը նույնացնելու, վերջին հաշվով իրականությունը իդեային, մտքին հանգեցնելու փորձերը, և, մասնավորապես Ելլինեկի նման փորձը ազգի էությունը պարզելու խնդրում, Շահումյանը գրում է. «Նմ'ան պրոֆեսորական անմտություն մենք գտնում ենք Ելլինեկի մոտ. անալիզի ենթարկելով ազգի հասկացողությունը, նա նույնպես (թեպետ մի քիչ այլ ճանապարհով) դալիս է այն եզրակացության, որ ազգը իրականում օբյեկտիվ

[1] Ստ. Շահումյան. Ընտիր երկեր, էջ 430։
[2] Նույն տեղում, էջ 433։
[3] Նույն տեղում, էջ 142։

կերպով գոյություն չունի, որ նրա գոյությունը ընդունելի է միմիայն մարդկային գիտակցության մեջ։ Նա սոսկ մի «իդեա» է»[1]։ Շահումյանը գտնում է, որ նման տեսակետը ոչ մի առնչություն չունի ազգի էության գիտական ըմբռնման հետ։

Շահումյանը հերքում է նաև բուրժուական այն գիտնականների հայացքները, որոնք ազգի էությունը փնտրում են վերացական հասկացողությունների մեջ. այսպես, օրինակ, ռուս կադետների գաղափարախոս Գեսսենը իր «Ժողովուրդ և ազգ» աշխատության մեջ փորձում է ապացուցել, որ ազգը ձևավորող գլխավոր հատկանիշը «ազգային գիտակցությունն» է։ Նման մեկնաբանություն են տալիս ազգի էության ավստրո-մարքսիզմի տեսաբանները և նրա հետևից Ռուսաստանում բունդականները, մենշևիկ լիկվիդատորները, հայ սպեցիֆիկները և այլ սոցիալ-նացիոնալիստները. այսպես, օրինակ, Շպրինգերը ազգը բնորոշում է հետևյալ կերպ. «ազգը, միակերպ մտածող և միակերպ խոսող մարդկանց միություն է»։ Օտտո Բաուերը իր միստիկական մտամարզանքներում ավելի առաջ է գնում. «ազգը,— գրում է նա,— մի այնպիսի համախմբում է, որը հիմնված է մարդկանց բնավորության և ճակատագրի ընդհանրության վրա»[2]։ Շահումյանը նշում է, որ բոլոր նացիոնալիստների մոտ ազգի էության իդեալիստական ըմբռնումը սերտորեն կապված է նրանց մետաֆիզիկական մոտեցման հետ։ Նրանք ոչ միայն հերքում են ազգի իրական, օբյեկտիվ գոյությունը, այլև դիտում իդեականը որպես մի ֆետիշ, որպես քարացած և անփոփոխ մի մեծություն։ «Բուրժուական մտածողությունը դիտում է ազգը որպես մի «հավիտենական» կատեգորիա, գրում է Շահումյանը, որը «ի սկզբանե» գոյություն ունի. նա դիտում է ազգը որպես բնության մի տվյալ, որը օժտված է բնորոշ «իմունենտ» առանձնահատկություններով։

Իդեալիզմն ազգային հարցը լուծելիս ամլացնում է նրա ռեալ բովանդակությունը, այն դիտում է վերացականորեն, կոնկրետ, պատմական իրադրությունից դուրս, ազգի էությունը տեսնելով մի ինչ-որ անբովանդակ հոգևոր սկզբունքի՝ «ազգային գաղափարի», «ազգային ոգու» մեջ և այլն։ Շահումյանը գտնում է, որ մարքսիստական մատերիալիզմը նախազգուշացնում է նման անմիտ ու դատարկ աբստրակցիաներից։ Նա վճռական պայքար է հայտարարում իդեալիզմի և տերտերականության դեմ։ «Պետք է ազգային հարցից պոկել նրա միստիկ քողը,— գրում է Շահումյանը,— մի կողմ նետել «ազգային ոգի», «ազգային գաղափար» և այլ բառերը, ազգը պետք է ըմբռնել իր ռեալ բովանդակությամբ, իր զարգացման մեջ՝ ծագումից մինչև անհետանալը։ Այս բոլորն անում է մարքսիստական մատերիալիստական իմացությունը»։ Այդ պատճառով էլ Շահումյանը գտնում է, որ ամենից առաջ պետք է տալ ազգի հասկացության գիտական հիմնավորումը։

Բացահայտելով ազգի էությունը, Շահումյանը ցույց է տալիս նրա ռեալ, հասարակական բովանդակությունը։ Նա գտնում է, որ ազգն ունի երկու անբաժան կողմ՝ բնական-հոգեբանական (լեզու, սովորույթներ և այլն) և հասարակական (հասարակական-տնտեսական և քաղաքական)։ Որպես այդ երկու կող-

---

[1] *Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 7։*

[2] *Отто Бауэр*, Национальный вопрос и социал-демократия. Изд. „Серп", 1909, стр. 12.

մերի միասնություն, ազգը մի ամբողջական հասարակական օրգանիզմ է, որը կազմավորվել է հասարակության զարգացման պատմական որոշակի պայմաններում։ Նա պատմական անցողիկ կատեգորիա է և ոչ թե մշտնջենական, ինչպես պատկերացնում են իդեալիստ-նացիոնալիստները։

Բացահայտելով ազգի սոցիալական բովանդակությունը, Շահումյանը գտնում է, որ նա, մի կողմից, որոշակի տերիտորիայի վրա ապրող, փոքրիշատե ընդհանուր ծագում, ընդհանուր լեզու, ընդհանուր կրոն, սովորույթներ և տրադիցիաներ ունեցող մեծաթիվ մարդկանց ամբողջությունն է, մյուս կողմից՝ հասարակական-տնտեսական և քաղաքական մի որոշ կարգ։ Առաջին կամ բնական-հոգեբանական կողմը այն բնական հիմքն է, որի վրա ձևավորվում է ազգը՝ հասարակության տնտեսական զարգացման որոշ աստիճանում։ Նա որակապես հասարակական նոր օրգանիզմ է, որը ծագել է նախընթաց սերունդների նախապատրաստած քանակական մատերիալից։ Լեզուն, կրոնը, սովորույթները և այլն, որպես բնական-հոգեբանական նախադրյալներ, իրենց զարգացման որոշ աստիճանում անհրաժեշտ դարձրին ազգի ծագումը։ Ազգին նախորդած ցեղային ու տոհմական միավորումները հիմնված էին արյունակցական կապերի վրա, իսկ, այնուհետև, ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, նրանք կորցնում են իրենց նշանակությունը և փոխարինվում մարդկանց այլ միավորումներով՝ ըստ տերիտորիալ հատկանիշի։ Ազգերը գոյանում են ցեղային միությունների մարդկային նյութից՝ նրանց հատուկ բնական-հոդեբանական տվյալներով։

Ազգը դիտելով որպես պատմական կատեգորիա, Շահումյանը, սակայն, ազգի ծագումը հստակորեն չի կապում ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիզմի ծագման ժամանակաշրջանի հետ։ Ազգի ծագումը նա կապում է ընդհանրապես ապրանքա-դրամային հարաբերությունների, ապրանքային տնտեսության զարգացման հետ, բայց ոչ թե ապրանքային-կապիտալիստական տնտեսության ծագման հետ։ Ըստ Շահումյանի, ազգը ապրանքային արտադրության տնտեսական հարաբերությունների երկարատև զարգացման արդյունք է, հարաբերություններ, որոնք իրենց զարգացման որոշ աստիճանում հասցրին այն բանին, որ զանազան ցեղերից ծագեցին ժամանակակից ազգերը և գոյացավ ազգային պետությունը։ Շահումյանը մատնանշում է, որ ազգի այնպիսի տարրեր, ինչպես լեզուն, սովորույթները և այլն, միանգամից երևան չեն եկել, նրանք անցել են զարգացման երկարատև ժամանակաշրջան, մինչև որ որոշ աստիճանում պատմական նյութ են դարձել ազգերի գոյացման համար։ «Այս բոլորը,— գրում է Շահումյանը, մատնացույց անելով ազգի տարրերը,— լեզուն, կրոնը և այլն, անարգել ու անընդհատ ընթացել է տնտեսական զարգացման հետ ձեռք-ձեռքի տված, մինչև որ ձևավորվել են ժամանակակից ազգերը»[1]։

Ազգի ծագման ու բնության այդպիսի հիմնավորումը մենք գտնում ենք ազգային հարցի վերաբերյալ Շահումյանի վաղ շրջանի «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատության մեջ (1906)։ Շահումյանի դատողությունները ցույց են տալիս, որ նա ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, լինելով երիտասարդ մարքսիստ, հիմնավորելով ազգային պրոբլեմը, զերծ չէր անճշտություններից ու սխալներից։ Տեղ-տեղ ազգը նա նույնացնում է պետության հետ, կրոնը դասում է ազգի հատկանիշների շարքը, լեզուն, սովո-

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարա. արխիվ, ֆ. 7։

յությունները, կրոնը սպառողական արժեքի նմանողությամբ դիտում է որպես ազգի «բնական-հոգեբանական» հիմք, մի հայտնի չափով նատուրալիզացիայի է ենթարկում հասարակական այդ երևույթները, ազգի ծագումը հստակորեն չի կապում կապիտալիզմի ծագման հետ և այլն։ Չնայած այդ բոլորին, իր գործունեության առաջին շրջանում, Հայաստանի բանվորական շարժման արշալույսին, ազգային հարցը մատերիալիստորեն հիմնավորելու Շահումյանի փորձերը հսկայական կարևորություն ունեն։

Ազգային հարցի ծագումը Շահումյանը կապում է կապիտալիզմի բարձրագույն ստադիայի՝ իմպերիալիզմի ծագման հետ, երբ կազմավորվում են բազմազգ պետությունները։ Հենց այդպիսի պետությունների գոյության պայմաններում էլ ծագում է ազգային հարցը՝ որպես իշխող և ենթարկվող կամ ճնշվող ազգությունների հարաբերություններ։ «Երբ ժամանակակից կապիտալիզմի համառ պահանջի շնորհիվ ծնունդ առան այժմյան խոշոր, մի քանի ազգերից բաղկացած պետությունները, հենց այդ ժամանակ էլ այդպիսի պետությունների սահմաններում ծնունդ առավ ազգային հարցը»[1]։

Իմպերիալիզմի դարաշրջանում, կազմավորվող բազմազգ պետության պայմաններում, իշխող ազգերի տիրապետող դասակարգերի ճնշումն ու ստրկացումն անխուսափելիորեն առաջ են բերում ճնշված ազգերի դժգոհությունը։ Շահումյանը գրում է, որ եթե իմպերիալիզմի դարաշրջանում, մի կողմից, Երևան է գալիս բազմազգ խոշոր պետությունների անհրաժեշտությունը, ապա, մյուս կողմից, անխուսափելի են դառնում բռնությունը, ճնշումը և որպես դրանց հետևանք՝ ճնշված ազգերի դժգոհությունը։ Այսպես են ծագում ազգային հակասությունները։

Շահումյանը գրում է, որ ազգային հակասություններն ունեն իրենց տնտեսական հիմքը։ Իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալի համակենտրոնացումն ու կենտրոնացումը առաջ են բերում արտադրության խոշորացում, աշխատանքի վիթխարի հանրայնացում, աշխատանքի նկատմամբ կապիտալի իշխանության ուժեղացում, բանվոր դասակարգի շահագործման սաստկացում, հարստության աճում մի բևեռում, աղքատության աճում՝ մյուս բևեռում, աշխատանքի և կապիտալի պայքարի սրում։ Ահա կապիտալիստական տնտեսությանը հատուկ այդ հակասությունն էլ առաջ է բերում մոնոպոլիստական միավորումների կողմից կառավարող միջազգային պետություններ, ժողովրդական մասսաների, հպատակեցված ազգերի ճնշման ու ստրկացման աճում, նրանց պայքարը հանուն քաղաքական ազատության ու անկախության։ «Մենք գիտենք,— ասում է Շահումյանը,— այդ (այսինքն կապիտալիստական — Հ. Ա.) տնտեսության հիմնական հակասությունը — մի կողմից՝ խոշոր արդյունաբերության անհրաժեշտությունը և օգտակարությունը, ազգային հարստության հսկայական աճումը, մյուս կողմից՝ ուժեղ ու մահացու մրցումը, մասսաների պրոլետարիզացիան, վարձու աշխատանքի շահագործությունը և այլն։ Մեկ ուրաղեցնող ազգային հակասությունը մի մասն է այդ հիմնական ընդհանուր հակասության, որ հատուկ է ժամանակակից սոցիալական կարգերին և բխում է այդ հակասությունից»[2]։

Ազգային հակասությունները սրվում են իշխող ազգերի տիրապետող դա-

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 7։
[2] Ստ. Շահումյան. Ընտիր երկեր, էջ 132։

սակարգերի արյունոտ գաղութային քաղաքականության հետևանքով։ Հենվելով իշխանության օրգանների վրա, այդ դասակարգերն ամեն կերպ ուժեղացնում են փոքր ազգերի ճնշումը, հալածում, զրկում են նրանց քաղաքական իրավունքներից և նրանց համար ստեղծում անտանելի դրություն։ «Օգտվելով իր ուժից, գերակշռող ազգության տիրող դասակարգը, հենվելով պետական մեքենայի վրա, զրկում է այս կամ այն մանր ազգությունը որոշ քաղաքական իրավունքներից և ստեղծում է նրա համար մի դժոխային կացություն»[1]։

Ազգային հակասության արմատական լուծումը Շահումյանը սերտորեն կապում է կապիտալիզմի հիմնական հակասության, այն է՝ աշխատանքի ու կապիտալի միջև եղած հակասության լուծման հետ։ Նա պնդում էր, որ այդ հակասությունը չի կարելի հաշտեցնել, ինչպես այդ մասին երազում են մետաֆիզիկ-նացիոնալիստները և դրա վրա կառուցում իրենց ազգային քաղաքականությունը։ Այդ հակասությունը լուծելու համար անհրաժեշտ է այն մինչև վերջ հասցնել՝ մինչև աշխատանքի հաղթանակը կապիտալի նկատմամբ։ Միայն այդ ճանապարհով կարելի է հասնել կապիտալիստական կարգի ոչնչացմանը և դրանով իսկ՝ նաև ազգային հարցի արմատական լուծմանը։

Ազգային հարցը լուծելիս Շահումյանը, ինչպես միշտ, անշեղորեն ղեկավարվում էր մատերիալիստական դիալեկտիկայի հիմնական դրույթով՝ ճշմարտությունը միշտ կոնկրետ է, վերացական ճշմարտություններ չկան։

Շահումյանը պնդում է, որ ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցի մասին ընդհանուր շաբլոն որոշումներ չի ընդունում։ Նա այդ հարցը լուծում է կոնկրետ կերպով՝ հաշվի առնելով պայմանները, տեղն ու ժամանակը։ Սոցիալ-նացիոնալիստները, շեղվելով այդ սկզբունքից, իսկույն ընկնում են մետաֆիզիկայի և իդեալիզմի մեջ։ Նրանք հորինում են ամեն տեսակ «ունիվերսալ» միջոցներ ազգային հարցը լուծելու համար։ «Մարքսիզմը,— գրում է Շահումյանը,— չունի և չի կարող ունենալ ոչ մի «համադարման» ազգային հարցի համար։ Մարքսիզմի համար գոյություն չունի, եթե կուզեք, մի ազգային հարց. նա ճանաչում է ազգային հարցեր։ Այսինքն՝ ազգային հարցը մարքսիզմը լուծում է ամեն մի առանձին դեպքում իր ուրույն և կոնկրետ պատմական արտահայտությունների մեջ և ոչ «ընդհանրապես», անկախ ժամանակի և տեղի պայմաններից»[2]։ Շահումյանը օրինակ է բերում, որ Մարքսը 19-րդ դ. 60-ական թվականներին կողմնակից էր Լեհաստանի անջատմանը Ռուսաստանից, իսկ ավելի ուշ, 900-ական թվականներին, սոցիալիստները, ելնելով պատմական նոր պայմաններից, հանդես եկան այդ անջատման դեմ։ Այս օրինակով Շահումյանը ցույց է տալիս, որ մարքսիզմի տեսակետից անհրաժեշտ է կոնկրետ պատմական մոտեցում ցուցաբերել դեպի ազգային հարցի լուծումը։ Շահումյանը գտնում է, որ հարցի առաջին և երկրորդ լուծման թվացող հակասությունը բացատրվում է միայն պատմական պայմանների փոփոխմամբ, որոնց հետևանքով մարքսիստները, ելնելով միջազգային բանվորական շարժման շահերից, տարբեր կերպ էին լուծում ազգային հարցը։ «Ինչ է այդ «հակասության», այդ «պարադոքսի» պատճառը,— գրում է Շահումյանը,— այն է, որ 60-ական թվականներին այլ էին թե՛ մասնավորապես Լեհաստանի և թե՛ ընդհանրապես

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 132։
[2] Նույն տեղում, էջ 372։

միջազգային պրոլետարիատի դրությունը, ընդհանուր քաղաքական սիտուացիան և այլ են այժմ։ Այն, ինչ որ օգտակար էր այն ժամանակ, վնասակար է այժմ և այլն։ Ահա ինչ է նշանակում, որ «ճշմարտությունը միշտ կոնկրետ է», որ պետք է միշտ ի նկատի ունենալ ժամանակի և տեղի պայմանները»[1]։

Ի հակադրություն նացիոնալ-սոցիալիստների, որոնք խոստանում էին իրենց «համադարմանով»— ազգային-կուլտուրական ավտոնոմիայով— «լիովին» լուծել ազգային հարցը, Շահումյանը, որպես հետևողական մարքսիստ, ասում է, որ ազգային պայքարն ու ճնշումն անհնար է վերացնել, քանի դեռ գոյություն ունի մասսաների կեղեքման ու շահագործման վրա հիմնված կապիտալիստական կարգը։ Շահումյանը մատնանշում է, որ կապիտալիզմի պայմաններում բանվոր դասակարգը դասակարգային պայքարի և քաղաքական որոշակի պահանջների միջոցով կարող է միայն հակադրվել ազգային ճնշմանը և մեղմացնել ազգային թշնամանքն ու ընդհարումները։ Այդ կարելի է կենսագործել միայն դեմոկրատիայի լիակատար հաղթանակի դեպքում։

Շահումյանը մատնանշում է ազգային հարցի լուծման երկու հիմնական ուղի։ Առաջին ուղին նկատի ունի պետության դեմոկրատական կառուցվածքի պայմաններում միայն թեթևացնել ճնշված ազգերի դրությունը։ Սոցիալ-դեմոկրատիայի խնդիրն այն է, որ դեմոկրատիայի հաղթանակի պայմաններում ամեն կերպ կանխի կապիտալիզմի կործանարար տենդենցները ճնշված ու ստրկացված ազգերի համար։ Նա կողմնակից չէ պատմական զարգացման օրինաչափ ընթացքով ստեղծված բազմազգ պետությունների քայքայմանը, ինչպես նացիոնալիստները։ Կապիտալիզմի պայմաններում սոցիալ-դեմոկրատիան պետք է ձգտի թուլացնել այն ճնշումն ու բռնությունը, որ իշխող ազգի տիրապետող դասակարգերը կիրառում են փոքր ազգերի նկատմամբ՝ քաղաքական իրավունքների, լեզվի, խղճի, տրադիցիայի և այլ հարցերում։ Ազգային հարցի լուծման երկրորդ ուղին նկատի ունի նրա արմատական լուծումը։ Այն կապված է պրոլետարիատի դասակարգային պայքարի հիմնական պատմական խնդրի՝ սոցիալիստական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման միջոցով կապիտալիզմի ոչնչացման հետ։ «Ազգային հակասության կատարյալ վերացումը,— գրում է Շահումյանը,— ուրիշ խոսքով՝ ազգային հարցի արմատական լուծումը անհնարին է, քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական արդյունաբերությունը։ Այդ հակասությունը կարող է վերանալ միայն այն ժամանակ, երբ վերջ կդրվի ներկա սոցիալական կարգերին, երբ աշխատանքը կազատագրվի կապիտալի լծից»[2]։

Առաջին ուղու իրականացման համար Շահումյանը մատնանշում է մեր պարտիայի ծրագրի հիմնական կետերը.

ա) Պետական կարգի լիակատար դեմոկրատացում և առանց ազգի խտրության քաղաքացիների իրավունքների հավասարեցում (պարագրաֆ 7)։ Շահումյանը նշում է, որ այս պահանջով օրենքի առաջ լիակատար հավասարություն է տրվում բոլոր քաղաքացիներին՝ անկախ ազգությունից, ինչպես և կրոնից ու սեռից։

Պետք է անօրինական ճանաչվեն և չկիրառվեն օրենսդրական ու վարչական օրգանների այն բոլոր որոշումները, որոնք խախտում են ազգերի իրավա-

[1] Ստ. Շահումյան. Ընտիր երկեր, էջ 163։
[2] Նույն տեղում, էջ 156։

հավասարության սկզբունքը և ուղղված են այս կամ այն ազգային փոքրամասնության դեմ։

բ) Լեզուների լիակատար իրավահավասարություն դպրոցում, գրականության մեջ, դատարանում, ոստիկանության օրգաններում և հասարակական ու պետական մյուս հաստատություններում։ Շահումյանը մատնանշում է, որ տեղական ինքնավարության օրգանները, որոնց ձեռքում է կենտրոնացվելու դպրոցական գործը, ըստ հնարավորության, կբացեն խառը, ինչպես և ազգային դպրոցներ, որոնք հավասար հիմունքներով կպահվեն պետական գանձարանի հաշվին։ Որևէ մեկի կողմից այդ պահանջների խախտման հետևանքը կլինի դատական պատասխանատվությունը։

գ) Մարզային ինքնավարություն այն վայրերի համար, որոնք ունեն կենցաղային ու տնտեսական առանձնահատուկ պայմաններ և առանձնահատուկ ազգային կազմ (պարագրաֆ 3)։ Շահումյանը գրում է, որ ապագա ազատ Ռուսաստանում պետք է լինի նոր վարչական բաժանում։ Քաղաքական կենտրոնացման հետ մեկտեղ, պետք է իրագործվի վարչական ու դատական գործերի ապակենտրոնացում։ Այդ նշանակում է, որ բոլոր պաշտոնատար անձինք ու դատավորներն ընտրվում են ժողովրդի կողմից և պատասխանատու են օրենքի և իրենց ընտրողների առջև։ Ժողովուրդների տնտեսական, կենցաղային ու ազգային առանձնահատկություններին համապատասխան պետք է ստեղծվեն տեղական ու մարզային ինքնավարություններ։

Շահումյանը մատնանշում է, որ պարտիայի ծրագիրը նույնպես ճանաչում է ազգերի ինքնորոշման իրավունքը (պարագրաֆ 9)։ Եթե որևէ ազգություն, գրում է Շահումյանը, «օբյեկտիվ-տնտեսական» կամ «սուբյեկտիվ-հոգեբանական» այս կամ այն պատճառներով չի ցանկանում մյուս ազգերի հետ մնալ մի պետության մեջ, նա պետք է ունենա անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունք։ Շահումյանը նշում է, որ սոցիալ-դեմոկրատիան անջատում չի քարոզում և չի հանձնարարում, բայց ճանաչում է ինքնորոշման իրավունքը ճիշտ այնպես, ինչպես ճանաչում է դեմոկրատական մյուս իրավունքները՝ խոսքի, խղճի ազատությունը և այլն։

Իր «Սոցիալ դեմոկրատիան և ազգային հարցը» (1906) և «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1913) աշխատություններում Շահումյանը ինքնորոշման կապակցությամբ հանգամանորեն վեր է լուծում ազգի պետական կառուցվածքի ձևերի հարցը։ Նա ցույց է տալիս նացիոնալիստների կողմից հարցերի հիմնավորման մեթոդոլոգիական արատները։ Նրանք հարցը կտրում են պատմական կոնկրետ իրադրությունից և կրկին առաջարկում ընդհանուր դեղատոմսեր։ Նրանք պնդում են կամ սեպարատիզմի կամ ֆեդերալիզմի բացարձակ անհրաժեշտությունը, իսկ հետագայում նաև ազգային-կուլտուրական ավտոնոմիայի անհրաժեշտությունը։ Շահումյանը գտնում է, որ ազգի պետական կառուցվածքի այս ձևերից և ո՛չ մեկը չի կարելի դոգմայի վերածել, ինչպես այդ անում են նացիոնալիստները։

Շահումյանը պաշտպանում էր ազգային հարցի վերաբերյալ 1913 թ. Օգոստոսյան խորհրդակցությունում ընդունված որոշումները։

1915 թ. Կովկասյան կազմակերպությունների խորհրդակցությունում Շահումյանը հանդես եկավ նացիոնալիստների ազգային ծրագրի դեմ, որը պահանջում էր ֆեդերացիա և կուլտուր-ազգային ավտոնոմիա։ Ազգային հարցի առթիվ ընդունված բանաձևում, որ կազմել էր Շահումյանը, ասված է.

«...Ռուսաստանի ֆեդերատիվ բաժանման և կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը համարելով ուտոպիական, մենք արձանագրում ենք, որ այդ պահանջների պրոպագանդան ներկայումս կրում է ծայր աստիճան վնասակար, ռեակցիոն բնույթ»[1]։

ՌՍԴԲ(բ)Պ Կովկասյան մարզային կոնֆերենցիայում Շահումյանը նորից պաշտպանում է ազգային հարցի վերաբերյալ Օգոստոսյան խորհրդակցության որոշումները։ Իր ելույթում նա ասում է. «Բոլշևիկների 1913 թ. կոնֆերենցիայում ազգային հարցի վերաբերյալ մեր ծրագիրը փոքր ինչ ընդլայնվեց և մարզային ինքնավարությունների փոխարեն ընկ. Լենինի առաջարկությամբ ընդունվեց մարզերի ավտոնոմիա»[2]։

Այսպես, ուրեմն, Շահումյանը ազգային հարցի խորը գիտակներից ու թեորետիկներից մեկն էր։ Նրա բոլոր աշխատությունները, զեկուցումներն ու ելույթները շնչում են նացիոնալիզմի բոլոր տարատեսակների դեմ մղվող անհաշտ պայքարով։ Այդ պայքարում Շահումյանը բանավոր ու գրավոր, տեսականորեն և գործնականորեն պաշտպանում էր մեր պարտիայի լենինյան ազգային ծրագիրը և նրա առանձին պրոբլեմները։ Իր ռևոլյուցիոն գործունեության բոլոր էտապներում Շահումյանը հաստատակամորեն պայքարում էր պարտիայի որոշումների և նրա մեծ առաջնորդ Լենինի ցուցումների կենսագործման համար։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 7։

[2] Ստ. Շահումյան. Ընտիր երկեր, էջ 192։